է լսել բազմափորձ և խոհական վարդապետի խոսակցութիւնը։

Նախընթաց օրը Կամենիցի քառաձի ֆայետոն մի ուղևորներ բերելով 'ի Թիւնա, պարապ յետս պիտի դառնար. աւագ երէցն խորհուրդ տուաւ՝ փոխանակ փոստի, այդ ֆայետոնը վարձել. կառավարն ուժան գնով յօժարեցաւ տանել զիս, որով բաղդ ունեցայ նոյն օրը օգոստոսի 20 ին, փառաւոր քառաձի ֆայետոնով մտնել, յետին ժամին, երբեմն մեր Անեցի Հայկազանց հռչակեալ քաղաքը։

Գ

ԿԱՄԵՆԻՑ

Հեռուէն չերևիր Կամենից, թէպէտ և բարձր ժայռի վրայ շինուած է. զի ևս բարձրագոյնք զնա կը շրջապատեն։ Տան վերստ մնացած, յայմէ ճանապարհին կ'երևի Հայք (Արմեանէ) կոչուած գիւղն. որ ըստ վկայելոյ Անտոնի, հնախօսին Կամենիցու, Հայոց սեփականութիւն տրուած է ժամանակաւ (1280) Լեւոն Դանելովիչ Կալիցիոյ Նախարարէն. Հայոց նմա մատուցած մեծամեծ ծառայութեանց փոխարէն. ասի՝ ժամանակ անցնելէն վերջը գաղթեր են Հայք 'ի Կամենից։

Թէպէտ և այժմ գիւղիս մէջ Հայ չկայ, սակայն լոկ Արմեանեի անունն քաղցր կը հնչէ յականջս ազգայնոյ։ Դեռ ևս առաջ գնալով՝ յերևան ելաւ Կամենից մասամբ, արուարձանօք, ապա իւր ամենայն պշրանօք, լուսաւորեալ 'ի վերուստ և 'ի ներքուստ։